ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 23

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2015թ. ապրիլի 16 ին կայացրած նիստի

Նիստին մասնակցում են հանձնաժողովի 7 անդամներ:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր տրամադրելու խնդրանքով << Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Ց.Բաբայան:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց՝

Ջերմուկ քաղաքի բնակիչ Էդվարդ Սիմոնյանի դիմումը ուղղված << Վայոց ձորի մարզպետին՝ առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու խնդրանքով,:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

Ելնելով առողջարանային վերականգնողական բուժման ուղեգիր ստանալու համար ներկայացված փաստաթղթերից և բժշկական ցուցումներից Ջերմուկ քաղաքի բնակիչ Էդվարդ Սիմոնյանին պետական պատվերի շրջանակներում տրամադրել <<Արզնի>> առողջարանի ուղեգիր:

Հանձնաժողովի նախագահ Հ.Սարգսյան

Քարտուղար Ց.Բաբայան